ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. (374010) 287401, (3740281) 2 25 22**

„01„ „08„ 2019թ N 01/12.4/3986-2019

<<ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ>> ՀԿ-Ի <<ՀԵՏՔ>> ԹԵՐԹԻ
ԼՐԱԳՐՈՂ Գ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բալասանյան

Ի պատասխան Ձեր 2019թ հուլիսի 23-ի հարցման, հայտնում ենք, որ.

1. Մարզում 2019թ հուլիսի 1-ի դրությամբ առկա են 106 աշխատատեղեր, որից
2. 6-ը մարզպետարանում /2 փոխմարզպետների հաստիքներ՝ յուրաքանչյուրը 529100 դրույքով, 1 առաջատար մասնագետ՝ ընտանիքի և կանանց պաշտպանության բաժնում՝ 175900 դրույք, ներքին աուդիտի բաժնի պետ 256600 դրույքով, ֆինանսական և սոցիալական տնտեսական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ 212300 դրույքով, 0.5 դրույքով մարզպետի օգնական՝ 148800դրամ աշխատավարձով և մեկ վարորդի հաստիք՝ 105800 դրամ աշխատավարձով:
3. Կից՝ էլեկտրոնային ֆայլով ներկայացնում ենք թափուր աշխատատեղերի ցանկը աշխատավարձի չափերով:
4. Աշխատատեղերը չեն համալրվում մասնագիտական /բժշկական և մանկավարժական/ կադրերի պակասի, իսկ բանվորական հաստիքները՝ ցածր աշխատավարձերի պատճառով:

01.08.2019

X

ՏՐԴԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Հարգանքով՝ Подписано: SARGSYAN TRDAT 2901890687 **Տ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատարող՝ Հ. Կրապետյան
Հեռ. 2-25-57

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն
Երեւան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

23.07.2019թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Պարոն Տրդատ Սարգսյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

Հարգելի պարոն *Սարգսյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում Ձեր կողմից ղեկավարվող մարզի աշխատատեղերի վերաբերյալ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով, խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Մարզում քանի՞ թափուր աշխատատեղ կա:
2. Տրամադրել թափուր աշխատատեղերի ցանկը՝ աշխատավարձի չափերով:
3. Եթե կան աշխատատեղեր, ի՞նչն է պատճառը, որ մարզի բնակիչները չեն դիմում (չեն աշխատում):

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. Բալասանյան

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
Մուտքի թիվ 4538
23. 07 2019